ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

ՀՀ ԵՎ ԼՂՀ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱԶՄՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ (30.06.2012 Թ. ԴՐՈՒԹՅԱՄԲ)


Նյութում վերլուծված են միայն ՀՀ և ԼՂՀ տարածքներում ներգրավված և տեղաբաշխված միջոցները, ուստի ներկայացված տվյալները կարող են տարբերվել ՀՀ կենտրոնական բանկի այլ տեղեկատվական նյութերում հրապարակված տվյալներից, քանի որ վերջիններում ներառված են նաև ՀՀ տարածքից դուրս ներգրավված և տեղաբաշխված միջոցների մեծությունները:

1. ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

30.06.2011-30.06.2012 թթ. ժամանակահատվածում բանկային համակարգի վարկային ներդրումների ծավալն ավելացել է 33.6%-ով և կազմել 1 տրլն 488 մլրդ դրամ:

Վարկային ներդրումների աճ գրանցվել է բոլոր մարզերում: Աճի տեմպն առավել բարձր է եղել Արմավիրի, Տավուշի և Վայոց ձորի մարզերում՝ համապատասխանաբար 121.4%, 91.0% և 83.9% *(տե՛ս հավելված 1.5)*:

Գծապատկեր 1




** Պատկերի հստակության նպատակով երևանի ցուցանիշները չեն ներառվել, Երևանում վարկային ներդրումների ծավալը 30.06.2012 թ. դրությամբ կազմել է 941 մլրդ դրամ:*

* *Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*

Հաշվետու ժամանակահատվածում Երևանում վարկային ներդրումներն ավելացել են 27.8%-ով (204.5 մլրդ դրամով), իսկ ՀՀ մնացած մարզերում և ԼՂՀ-ում համընդհանուր վարկային ներդրումներն ավելացել են 45.0%-ով (169.9 մլրդ դրամով), ինչի արդյունքում ընդհանուր վարկային ներդրումներում 2.9 տոկոսային կետով նվազել է Երևանին հատկացված վարկերի տեսակարար կշիռը՝ կազմելով 63.2% *(տե՛ս գծապատկեր 2, հավելված 1.2)*:

Գծապատկեր 2

Ընդհանուր վարկային ներդրումների կառուցվածքն ըստ մարզերի




1. Երևան, 2. Արարատ, 3. Կոտայք, 4. Արմավիր, 5. Արագածոտն, 6. Շիրակ, 7. Լոռի, 8. Գեղարքունիք, 9. Տավուշ, 10. Վայոց ձոր, 11. Սյունիք, 12. ԼՂՀ

2000-2012 թթ. ժամանակաշրջանում վարկային ներդրումներում Երևանի մասնաբաժինը հիմնականում տատանվել է 65-70%-ի շրջանակներում *(տե՛ս գծապատկեր 3)*:

Գծապատկեր 3

Վարկային ներդրումների միջմարզային կառուցվածքը (բոլոր բանկերը)



30.06.2011-30.06.2012 թթ. բանկային համակարգում ակտիվների քանակն ավելացել է 6.8%-ով: Նշված ժամանակահատվածում Երևանին բաժին ընկնող ակտիվների տեսակարար կշիռն աճել է 2.7 տոկոսային կետով և 30.06.2012 թ. դրությամբ կազմել 40.5%:

Երևանում վարկերի աճը հիմնականում պայմանավորված է առևտրի, սպառողական և արդյունաբերության (հիմնականում՝ շինանյութերի) ոլորտների վարկավորման աճով: Վերոնշյալ ճյուղերի վարկավորումն ավելացել է համապատասխանաբար 47.6%-ով (կամ 83.7 մլրդ դրամով), 37.1%-ով (կամ 37.6 մլրդ դրամով) և 28.7%-ով (կամ 40.8 մլրդ դրամով):

ՀՀ մյուս 10 մարզերում և ԼՂՀ-ում վարկերի աճը հիմնականում պայմանավորված է արդյունաբերության (հիմնականում՝ հանքագործական), սպառողական և առևտրի ճյուղերին տրամադրված վարկերի աճով: Նշված ճյուղերի վարկավորումը (առանց Երևանի) աճել է համապատասխանաբար 86.2%-ով (կամ 75.3 մլրդ դրամով), 42.4%-ով (կամ 36.7 մլրդ դրամով) և 39.0%-ով (կամ 19.0 մլրդ դրամով): ՀՀ գրեթե բոլոր մարզերում (բացառությամբ՝ Արագածոտնի և Շիրակի), և ԼՂՀ-ում գրանցվել է արդյունաբերության վարկավորման աճ: Արդյունաբերության ճյուղի համեմատաբար խոշոր աճ է արձանագրվել Արմավիրի (46.6 մլրդ դրամով), Արարատի (7.5 մլրդ դրամով) և Տավուշի մարզերում (6.9 մլրդ դրամով):

Հաշվետու ժամանակահատվածում.

- արդյունաբերության վարկերն ավելացել են ՀՀ գրեթե բոլոր մարզերում և ԼՂՀ-ում՝ բացառությամբ Արագածոտնի և Շիրակի մարզերի,
- գյուղատնտեսության վարկերն ավելացել են ՀՀ գրեթե բոլոր մարզերում և ԼՂՀ-ում՝ բացառությամբ Կոտայքի մարզի,
- առևտրի վարկերն ավելացել են ՀՀ գրեթե բոլոր մարզերում և ԼՂՀ-ում՝բացառությամբ Տավուշի և Սյունիքի մարզերի,
- սպառողական վարկերն ավելացել են ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում,
- հիփոթեքային վարկերն ավելացել են ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում:

Ըստ տնտեսության ճյուղային բաշխվածության՝ հաշվետու տարում ընդհանուր վարկային ներդրումներում 2.6 և 1.8 տոկոսային կետով ավելացել են արդյունաբերության ճյուղի և առևտրի տեսակարար կշիռները: Փոխարենը նվազել են ֆինանսական հատվածի և շինարարության վարկերի տեսակարար կշիռները՝ համապատասխանաբար 1.8 և 1.0 տոկոսային կետերով *(տե՛ս աղյուսակ 1)*:

Աղյուսակ 1. Վարկային ներդրումների տեսակարար կշիռներն ըստ ճյուղերի (բոլոր բանկերը)

%


Ճյուղեր	**30.09.00**	**31.12.01**	**30.06.03**	**30.06.04**	**30.06.05**	**30.06.06**	**30.06.07**	**30.06.08**	**30.06.09**	**30.06.10**	**30.06.11**	**30.06.12**
Արդյունաբերություն	34	38	31	26	22	20	16	12	15	19	21	23
Գյուղատնտեսություն	8	11	10	7	8	6	6	5	7	6	6	6
Շինարարություն	2	3	4	4	4	4	5	6	7	8	8	7
Տրանսպորտ և կապ	2	2	1	1	2	2	1	2	2	3	3	3
Առևտուր	11	17	20	21	22	22	20	20	21	21	20	22
Ֆինանսական հատված	7	6	7	7	5	6	5	5	4	4	6	4
Սպառողական վարկեր	18	14	21	27	27	26	29	29	22	18	17	18
Հիփոթեքային					4	8	11	13	13	11	9	8
Այլ ճյուղեր	18	9	6	7	6	6	7	8	9	10	10	9

Ընդհանուր վարկերի բաշխվածությունը տնտեսության ճյուղերում ըստ մարզերի բևեռացված բնույթ ունի և կենտրոնացված է Երևանում (բացառությամբ՝ գյուղատնտեսության ճյուղի. Երևանին բաժին է ընկնում գյուղատնտեսության ընդհանուր վարկերի 13%-ը) *(տե՛ս հավելված 1.2)*: Գյուղատնտեսության ճյուղին տրամադրված վարկերում ամենամեծ տեսակարար կշիռ ունեն Արմավիրի մարզը՝ 17.3%, Արարատի մարզը՝ 13.9% և Կոտայքի մարզը՝ 11.8% (30.06.2011 թ. դրությամբ՝ համապատասխանաբար 20.2%, 16.4% և 18.7%), իսկ ամենափոքր տեսակարար կշիռը՝ Գեղարքունիքի մարզը՝ 3.3%, Սյունիքի մարզը՝ 3.5 և Տավուշի մարզը՝ 2.4% (30.06.2011 թ.՝ համապատասխանաբար 4.2%, 3.8% և 2.3%):

Վարկային ներդրումների ճյուղային բաշխվածության տեսանկյունից՝ ՀՀ մարզերում (բացառությամբ՝ Երևանի) և ԼՂՀ-ում վարկային պորտֆելը չափավոր կենտրոնացված է. ըստ տնտեսության ճյուղերի վարկավորման՝ Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը նախորդ տարվա համեմատ նվազել է 0.01 կետով և հաշվետու ժամանակահատվածում կազմել 0.118: Նույն ցուցանիշի միջին մեծությունը ըստ ՀՀ մարզերի (բացառությամբ՝ Երևանի) և ԼՂՀ-ի կազմել է 0.171՝ վկայելով որոշ մարզերում վարկավորման ճյուղային համեմատաբար բարձր կենտրոնացվածության մասին *(տես գծապատկեր 4)*[1]:

[1] *Գծապատկերում նշված են 30.06.2012 թ. Հերֆինդալ-Հիրշմանի գործակիցները:*


Գծապատկեր 4



Վարկային ներդրումների ժամկետայնության առումով՝ հաշվետու տարում 1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ վարկերի տեսակարար կշիռն աճել է 2.8 տոկոսային կետով և կազմել 79%:

30.06.12 թ. դրությամբ ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում 1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ վարկերի ծավալները գերազանցել են կարճաժամկետ վարկերի ծավալները *(տե՛ս հավելված 1.3)*:


Գծապատկեր 5



Հաշվետու տարվա ընթացքում վարկային ներդրումների կառուցվածքում արտարժութային վարկերի տեսակարար կշիռն աճել է 6.6 տոկոսային կետով և 30.06.12 թ. դրությամբ կազմել ընդհանուր վարկերի 64.5%-ը *(տե՛ս հավելված 1.4)*:

ՀՀ մարզերի մեծ մասում (Արագածոտնի, Շիրակի, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Սյունիքի) դրամային վարկերի տեսակարար կշիռը գերազանցել է արտարժութային վարկերի տեսակարար կշիռը *(տե՛ս հավելված 1.4)*:


Գծապատկեր 6



Հաշվետու տարում փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկերի ծավալները նվազել են 2.1%-ով կամ 7.8 մլրդ դրամով *(տե՛ս հավելվածներ 1.5 և 1.6)*: Արդյունքում՝ ընդհանուր վարկային ներդրումներում 8.9 տոկոսային կետով նվազել է փոքր և միջին բիզնեսին[2] տրամադրված վարկերի տեսակարար կշիռը և 30.06.12 թ. դրությամբ կազմել 24.3% *(տե՛ս հավելված 1.1)*: Հատկանշական է, որ փոքր և միջին բիզնեսին համակարգի կողմից տրամադրված ընդհանուր վարկերում Երևանի մասնաբաժինը աճել է 2.7 տոկոսային կետով՝ կազմելով 62.7% *(տե՛ս հավելված 1.2)*:

Միջազգային վարկային ծրագրերով[3] տրամադրված վարկերը հաշվետու տարում ավելացել են 52.3%-ով և 30.06.2012 թ. դրությամբ կազմել 264.1 մլրդ դրամ: Արդյունքում՝ նախորդ տարվա համեմատ 2.1 տոկոսային կետով աճել է միջազգային վարկային ծրագրերի շրջանակներում տրամադրված միջոցների տեսակարար կշիռն ընդհանուր վարկային ներդրումներում և հաշվետու տարվա վերջին կազմել 17.7% *(տե՛ս գծապատկեր 7)*:

Գծապատկեր 7




[2] Փոքր և միջին բիզնեսը ներառում է այն իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին, որոնց աշխատողների թվաքանակը մինչև 100 աշխատող է:

[3] Միջազգային ծրագրերով տրամադրված վարկեր են նաև միջազգային ծրագրերի (օր.՝ Գերմանա-հայկական հիմնադրամի ծրագրեր, Համաշխարհային բանկի Գյուղատնտեսության բարեփոխումների աջակցության ծրագիր և այլն) միջոցով բանկերի միջնորդությամբ տրամադրված վարկերը:

Միջազգային վարկային ծրագրերով տրամադրված վարկերը Երևանում ավելացել են 54.6%-ով և հաշվետու տարվա վերջին կազմել 147.5 մլրդ դրամ, ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում՝ 49.6%-ով և 30.06.2012 թ. դրությամբ կազմել 116.6 մլրդ դրամ, ընդ որում՝ ՀՀ բոլոր մարզերում գրանցվել է միջազգային վարկային ծրագրերով տրամադրված վարկերի աճ: Արդյունքում, նախորդ տարվա համեմատ, Երևանի մասնաբաժինը միջազգային վարկային ծրագրերի շրջանակներում տրամադրված միջոցներում աճել է 0.8 տոկոսային կետով և 30.06.2012 թ. կազմել 55.8% *(տե՛ս գծապատկեր 8)*:

Գծապատկեր 8


Ներկայումս գործող միջազգային վարկային ծրագրերի շրջանակներում տրամադրվող միջոցների կառուցվածքը



Մարզերին տրամադրված ընդհանուր վարկերում միջազգային վարկային ծրագրերի շրջանակներում տրամադրված միջոցների տեսակարար կշիռը նախորդ տարվա համեմատ աճել է 0.6 տոկոսային կետով և կազմել 21.3%, ինչը վկայում է ՀՀ մարզերի համար միջազգային ծրագրերի շրջանակներում իրականացվող վարկավորման կարևորության մասին *(տե՛ս հավելված 1.1)*:


Գծապատկեր 9

Միջազգային ծրագրերով տրամադրած վարկերի կառուցվածքն ըստ մարզերի



1. Երևան, 2. Արարատ, 3. Կոտայք, 4. Արմավիր, 5.Արագածոտն, 6. Շիրակ, 7. Լոռի, 8. Գեղարքունիք, 9. Տավուշ, 10. Վայոց ձոր, 11. Սյունիք, 12. ԼՂՀ

Ըստ վարկային ներդրումների վերադարձելիության՝ հաշվետու տարում ժամկետանց վարկային ներդրումների տեսակարար կշիռը աճել է 0.1 տոկոսային կետով՝ 30.06.12 թ. դրությամբ կազմելով ընդհանուր վարկային ներդրումների 1.5%-ը *(տե՛ս հավելված 1.1 և գծապատկեր 10)*:



Ինչպես երևում է գծապատկեր 10-ից, ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը համեմատաբար բարձր է Կոտայքի (4.7%), Արարատի (1.4%), Լոռու (1.1%) մարզերում և Երևանում (1.6%):

Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումները

30.06.12 թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են 32 վարկային կազմակերպություններ, որոնց տրամադրած ընդհանուր վարկերի ծավալը կազմել է բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի ծավալի 8.2%-ը (30.06.11 թ.՝ 6.7%-ը):

Հաշվետու ժամանակահատվածում վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերն ավելացել են 65.1%-ով (48.4 մլրդ դրամով)՝ հիմնականում ի հաշիվ գյուղատնտեսության և սպառողական (ներառյալ՝ հիփոթեքային) վարկերի աճի:

Դիտարկվող ժամանակաշրջաններում վարկային կազմակերպությունների վարկերն ըստ ճյուղերի ունեցել են հետևյալ կառուցվածքը.

Աղյուսակ 2. Վարկերն ըստ տնտեսության ճյուղերի

Տնտեսության ճյուղեր	***Վարկերի ծավալ*** *(մլն ՀՀ դրամ)*									
	30.06.03	30.06.04	30.06.05	30.06.06	30.06.07	30.06.08	30.06.09	30.06.10	30.06.11	30.06.12
Արդյունաբերություն	718	497	1371	2203	3544	4817	7054	8609	3716	11130
այդ թվում՝ սննդի	591	313	742	1152	1196	1494	1584	1544	839	2654
Գյուղատնտեսություն	269	312	537	1046	2481	6676	4790	12529	16797	27245
Առևտուր	54	111	270	1235	6969	9151	7561	10283	12018	17867
Շինարարություն	121	89	112	193	1253	5482	9148	1559	2015	4205
Սպառողական (ներառյալ հիփոթեք)	492	864	1584	2396	8455	13368	12953	9602	16334	26903
Այլ ճյուղեր	324	315	832	1434	5822	13316	10707	16209	23428	35319
Ընդամենը	1977	2185	4706	8508	28525	52811	53798	60335	74311	122670

Հաշվետու տարում վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի աճ է արձանագրվել ՀՀ բոլոր մարզերում *(տե՛ս աղյուսակ 3)*: Վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված ընդհանուր վարկերում 1.8 տոկոսային կետով աճել է ամենամեծ տեսակարար կշիռն ունեցող Երևանի մասնաբաժինը՝ կազմելով 58.7%:

Աղյուսակ 5. Վարկերն ըստ մարզերի (հազար ՀՀ դրամ)

Ցուցանիշներ	Երևան	Արարատ	Կոտայք	Արմավիր	Արագածոտն	Շիրակ	Լոռի	Գեղարքունիք	Տավուշ	Վայոց ձոր	Սյունիք	ԼՂՀ
30.06.03												
վարկերի ծավալները	732523	140711	347977	328411	24715	10955	18282	5198	31693	8359	328640	-
տեսակարար կշիռները (%)	37.0	7.1	17.6	16.6	1.2	0.6	0.9	0.3	1.6	0.4	16.6	-
30.06.04												
վարկերի ծավալները	1464134	76409	28056	41233	75318	18110	26532	12726	70551	30724	341034	-
տեսակարար կշիռները (%)	67.0	3.5	1.3	1.9	3.4	0.8	1.2	0.6	3.2	1.4	15.6	-
30.06.05												
վարկերի ծավալները	3054690	38852	216496	127993	142609	165228	199822	40155	165667	55467	498759	-
տեսակարար կշիռները (%)	64.9	0.8	4.6	2.7	3.0	3.5	4.3	0.9	3.5	1.2	10.6	-
30.06.06												
վարկերի ծավալները	5133064	223093	481738	238415	183164	403482	443152	183109	117965	71290	910830	118594
տեսակարար կշիռները (%)	60.3	2.6	5.7	2.8	2.2	4.7	5.2	2.2	1.4	0.8	10.7	1.4
30.06.07												
վարկերի ծավալները	18824712	1033694	941069	1499227	534782	1062152	1300085	573330	512376	210739	434469	598130
տեսակարար կշիռները (%)	66.0	3.6	3.3	5.3	1.9	3.7	4.6	2.0	1.8	0.7	5.0	2.1
30.06.08												
վարկերի ծավալները	34953514	1877424	2126097	2842366	1097859	1720411	2223500	1038964	1136956	362216	2171493	1260057
տեսակարար կշիռները (%)	66.2	3.6	4.0	5.4	2.1	3.3	4.2	2.0	2.2	0.7	4.1	2.4
30.06.09												
վարկերի ծավալները	36619084	1499920	1948526	2469149	771746	1682260	2394086	691453	1879617	1308447	1761307	772197
տեսակարար կշիռները (%)	68.1	2.8	3.6	4.6	1.4	3.1	4.5	1.3	3.5	2.4	3.3	1.4
30.06.10												
վարկերի ծավալները	33718369	4475028	2224890	4897139	1561345	2045382	2085920	1664782	1168453	544999	2448781	3499700
տեսակարար կշիռները (%)	55.9	7.4	3.7	8.1	2.6	3.4	3.5	2.8	1.9	0.9	4.1	5.8
30.06.11												
վարկերի ծավալները	42298191	5323052	3528503	5805633	2095744	2399728	2163775	1857234	1271198	935024	2349826	4283043
տեսակարար կշիռները (%)	56.9	7.2	4.7	7.8	2.8	3.2	2.9	2.5	1.7	1.3	3.2	5.8
30.06.12												
վարկերի ծավալները	71987720	8127209	4838759	9563430	3288168	4545315	3329705	3026427	2126939	1384996	4395021	6055814
տեսակարար կշիռները (%)	58.7	6.6	3.9	7.8	2.7	3.7	2.7	2.5	1.7	1.1	3.6	4.9

2. ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ[4]


Բանկերի կողմից ներգրավված միջոցները նախորդ տարվա համեմատ ավելացել են 37.7%-ով և հաշվետու տարվա վերջին կազմել 1.03 մլրդ դրամ, ընդ որում, բացառությամբ Վայոց ձորի մարզի՝ ՀՀ մնացած մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է ավանդների աճ: Ֆիզիկական անձանցից ներգրավված միջոցները նախորդ տարվա համեմատ ավելացել են 46.9%-ով, իսկ իրավաբանական անձանցից ներգրավված միջոցները՝ 22.9%-ով և կազմել համապատասխանաբար 679.6 մլրդ դրամ և 351.8 մլրդ դրամ *(տե՛ս հավելված 1.5 և 1.7)*:

Հատկանշական է, որ ՀՀ բոլոր մարզերում (բացառությամբ Վայոց ձորի) և ԼՂՀ-ում ավելացել են ֆիզիկական անձանցից ներգրավված միջոցները:

Հաշվետու տարում ներգրավված միջոցների կենտրոնացվածությունը Երևանում նվազել է 1.5 տոկոսային կետով և կազմել 82.4%: Ֆիզիկական անձանցից ներգրավված միջոցների կենտրոնացվածությունը Երևանում նվազել է 0.7 տոկոսային կետով, իսկ իրավաբանական անձանցից ներգրավված միջոցներինը աճել է 3.0 տոկոսային կետով՝ կազմելով համապատասխանաբար 83.8% և 79.7% *(տե՛ս հավելված 2.2)*:

[4] *Ներգրավված միջոցները ներառում են միայն ՀՀ և ԼՂՀ տարածքներում ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված ցպահանջ (ներառյալ բանկային հաշիվները) և ժամկետային ավանդները:*


Գծապատկեր 11



** Պատկերի հստակության նպատակով Երևանի տվյալները ներառված չեն, որտեղ 30.06.12 թ. դրությամբ ավանդների ծավալը կազմել է 850 մլրդ դրամ:*

Հաշվետու տարվա ընթացքում ընդհանուր ներգրավված միջոցների կազմում ֆիզիկական անձանց ավանդների տեսակարար կշիռը ավելացել է 4.1 տոկոսային կետով՝ կազմելով 65.9% *(տե՛ս հավելված 2.1 և գծապատկեր 12)*: 30.06.12 թ. դրությամբ, ֆիզիկական անձանց ավանդները գերակշռել են ՀՀ բոլոր մարզերում (բացառությամբ՝ Գեղարքունիքի մարզի և ԼՂՀ-ի, որտեղ գերակշռել են իրավաբանական անձանցից ներգրավված ավանդները):


Գծապատկեր 12



Ըստ ներգրավված միջոցների ժամկետայնության՝ հաշվետու տարում ժամկետային ավանդների տեսակարար կշիռը աճել է 1.6 տոկոսային կետով և կազմել 64.2%: ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում ժամկետային ավանդների ծավալները գերազանցել են ցպահանջ ավանդների ծավալները *(տե՛ս հավելված 2.3 և գծապատկեր 13)*:

Գծապատկեր 13

Ժամկետային և ցպահանջ ներգրավված միջոցների կառուցվածքը 30.06.12 թ. դրությամբ




30.06.12 թ. Երևանին բաժին է ընկել ընդհանուր ցպահանջ ավանդների 89.0%-ը և ընդհանուր ժամկետային ավանդների 78.7%-ը:

Ցպահանջ միջոցների գերակշիռ մասը (50.3%) կազմել են ֆիզիկական անձանց միջոցները: Ժամկետային միջոցների գերակշիռ մասը (74.6%) նույնպես կազմել են ֆիզիկական անձանց ավանդները, ինչը արտահայտված է ՀՀ գրեթե բոլոր մարզերում՝ բացառությամբ Գեղարքունիքի մարզի և ԼՂՀ-ի, որտեղ ժամկետային ավանդներում գերակշռել են իրավաբանական անձանց ավանդները՝ 66.1% *(տե՛ս հավելվածներ 2.5 և 2.7)*:

Նախորդ տարվա համեմատ՝ հաշվետու տարում ՀՀ դրամով ավանդների տեսակարար կշիռն աճել է 3.4 տոկոսային կետով և 30.06.12 թ. դրությամբ կազմել ընդհանուր ներգրավված միջոցների 34.3%-ը, ընդ որում՝ Երևանում, Արարատում, Արագածոտնում, Շիրակում և ԼՂՀ-ում արտարժույթով ավանդների տեսակարար կշիռը գերազանցել է դրամով ներգրավված ավանդների տեսակարար կշիռը *(տե՛ս հավելված 2.4 և գծապատկեր 14)*:

Գծապատկեր 14

Դրամով և արտարժույթով ներգրավված միջոցների կառուցվածքը 30.06.12 թ. դրությամբ




Ըստ ներգրավման աղբյուրների՝ 30.06.12 թ. դրությամբ արտարժույթով ներգրավված միջոցների 26.8%-ը, իսկ դրամով ներգրավված միջոցների 48.1%-ը հավաքագրվել է իրավաբանական անձանցից *(տե՛ս հավելվածներ 2.9 և 2.11)*:

3. ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ

30.06.12 թ. դրությամբ բանկային համակարգի կողմից ներգրավված միջոցների ընդհանուր ծավալը գիջել է վարկային ներդրումների ծավալին (30.7%-ով): Վարկերի ծավալները գերազանցել են ավանդների ծավալները ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում՝ բացառությամբ Գեղարքունիքի մարզի *(տե՛ս գծապատկեր 15)*:

Գծապատկեր 15




** Պատկերի հստակության նպատակով Երևանի տվյալները ներառված չեն, որտեղ 30.06.12 թ. ներգրավված միջոցները կազմել են 850 մլրդ դրամ, վարկերն առանց միջազգային ծրագրերով տրամադրված վարկերի՝ 794 մլրդ դրամ, ընդհանուր վարկերը՝ 941 մլրդ դրամ:*

Ավանդների և վարկային ներդրումների հարաբերակցությունը առավել բարձր է Երևանում (90.3%), Սյունիքում (46.8%) և ԼՂՀ-ում (42.6%):

Տարածքային ստորաբաժանումների բաշխվածության առումով՝ հաշվետու տարում մեկ մասնաճյուղին[5] բաժին ընկնող ներգրավված միջոցների և վարկային ներդրումների ծավալներն ավելացել են համապատասխանաբար 433.6 մլն դրամով և 550.3 մլն դրամով և 30.06.12 թ. դրությամբ կազմել են 2.1 մլրդ դրամ և 3.1 մլրդ դրամ *(տե՛ս հավելված 3 և գծապատկեր 16)*:


Գծապատկեր 16



[5] *Գլխամասային գրասենյակները դիտվել են որպես մասնաճյուղ:*

Մեկ շնչին բաժին ընկնող ներգրավված միջոցների և վարկային ներդրումների ծավալները դարձյալ ցուցաբերել են աճի միտումներ. ավելացել են համապատասխանաբար 36.8%-ով և 32.7%-ով և 30.06.12 թ. դրությամբ կազմել են 301 հազար դրամ և 435 հազար դրամ *(տե՛ս հավելված 3 և գծապատկեր 17)*:

Գծապատկեր 17



4. ԱՄՓՈՓՈՒՄ

30.06.11-30.06.12 թթ. ժամանակահատվածում

1. ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է վարկային ներդրումների աճ: Ավանդների աճ է արձանագրվել ՀՀ բոլոր մարզերում՝ բացառությամբ Վայոց ձորի մարզի: Ավանդների աճի տեմպը (37.7% աճ) գերազանցել է վարկերի աճի տեմպը (33.6% աճ), ինչի արդյունքում վարկերի և ավանդների հարաբերակցության ցուցանիշը նվազել է 0.04 կետով և կազմել 1.44:

2. Նշված ժամանակահատվածի հատկանշական փոփոխություններն են.

- Վարկերի կենտրոնացվածությունը Երևանում նվազել է. Երևանի մասնաբաժինը նվազել է 2.9 տոկոսային կետով և կազմել 63.2%:
- մինչև 1 տարի մարման ժամկետայնությամբ վարկերն ավելացել են 17.5%-ով, 1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ վարկերը՝ 38.6%-ով, ինչի արդյունքում ընդհանուր վարկերում 1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ վարկերի տեսակարար կշիռն աճել է 2.8 տոկոսային կետով և կազմել 79.0%: ՀՀ գրեթե բոլոր մարզերում (բացառությամբ՝ Կոտայքի և Սյունիքի) 1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ վարկերի տեսակարար կշիռն աճել է:
- ՀՀ դրամով տրամադրված վարկերն ավելացել են 16.0%-ով, արտարժույթով տրամադրված վարկերը՝ 45.8%-ով, ինչի արդյունքում արտարժույթով վարկերի տեսակարար կշիռն աճել է 5.4 տոկոսային կետով և կազմել է 64.5%: ՀՀ գրեթե բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արտարժութային վարկերի տեսակարար կշիռը ընդհանուրում աճել է (բացառությամբ՝ Շիրակի Լոռու և Սյունիքի մարզերի):
- ՀՀ դրամով ավանդներն ավելացել են 53.1%-ով, արտարժույթով ավանդները՝ 30.8%-ով, որի արդյունքում արտարժույթով ավանդների տեսակարար կշիռը նվազել է 3.5 տոկոսային կետով և կազմել է ընդհանուր ավանդների 65.7%-ը: Երևանում, Կոտայքի, Արմավիրի, Լոռու,

Գեղարքունիքի, Տավուշի և Վայոց ձորի մարզերում դրամային ավանդների տեսակարար կշիռը ընդհանուր ավանդներում աճել է:

- Ժամկետային ավանդներն ավելացել են 41.0%-ով, իսկ ցպահանջ ավանդները՝ 32.1%-ով, որի արդյունքում ժամկետային ավանդների տեսակարար կշիռն աճել է 1.5 տոկոսային կետով և կազմել ընդհանուր ավանդների 64.2%-ը:
- Ֆիզիկական անձանց ավանդներն ավելացել են 46.9%-ով, իրավաբանական անձանց ավանդները՝ 22.9%-ով, որի արդյունքում ֆիզիկական անձանց ավանդների տեսակարար կշիռն ավելացել է 4.1 տոկոսային կետով և կազմել ընդհանուր ավանդների 65.9%-ը: Բացառությամբ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի, ՀՀ մյուս մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է ֆիզիկական անձանց ավանդների տեսակարար կշռի աճ:

30.06.12 թ. դրությամբ

Մարզերում տեղաբաշխված վարկային ներդրումներում համեմատաբար բարձր է առևտրի, արդյունաբերության, սպառողական և գյուղատնտեսության վարկերի տեսակարար կշիռը (*տե՛ս հավելված 1.1*).

Արդյունաբերության ճյուղ. ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում բավականին բարձր է արդյունաբերության վարկերի տեսակարար կշիռը (տատանվում է 8 - 55%-ի միջակայքում), իսկ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Արմավիրի և Արարատի մարզերը (54.8% և 36.2%):

Առևտրի ճյուղ. առևտրի վարկերի տեսակարար կշիռը տատանվում է 8-24%-ի միջակայքում: Ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Երևանը, Տավուշի և Սյունիքի մարզերը, որտեղ տրամադրված ընդհանուր վարկերի համապատասխանաբար 23.9%-ը, 18.8%-ը և 15.9%-ը հատկացված է առևտրի ճյուղին:

Սպառողական վարկեր. ՀՀ մարզերի և ԼՂՀ-ի ընդհանուր վարկերում սպառողական վարկերի տեսակարար կշիռը տատանվում է 7-28%-ի միջակայքում: Ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Երևանը, Կոտայքի և Լոռու մարզերը, որտեղ սպառողական վարկերի տեսակարար կշիռը կազմում է համապատասխանաբար 27.6%, 21.5% և 17.1%:

Հիփոթեքային վարկեր. ՀՀ մարզերի և ԼՂՀ-ի ընդհանուր վարկերում հիփոթեքային վարկերի տեսակարար կշիռը տատանվում է 3-10%-ի միջակայքում: Ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Երևանը, ԼՂՀ-ն և Շիրակի մարզը՝ համապատասխանաբար 9.5%, 8.2% և 7.7%:

Շինարարության ճյուղ. ՀՀ մարզերի և ԼՂՀ-ի ընդհանուր վարկերում շինարարության վարկերի տեսակարար կշիռը տատանվում է 1-14%-ի միջակայքում: Համեմատաբար բարձր տեսակարար կշիռ ունեն ԼՂՀ-ն, Երևանը և Լոռու մարզը, որտեղ տրամադրված վարկերի համապատասխանաբար 13.8%-ը, 8.2%-ը և 6.0%-ը հատկացված է այս ճյուղին:

Գյուղատնտեսության ճյուղ. ՀՀ մարզերի և ԼՂՀ-ի ընդհանուր վարկերում գյուղատնտեսության վարկերի տեսակարար կշիռը տատանվում է 1-28%-ի միջակայքում: Ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Վայոց ձորի, Արագածոտնի և Արարատի մարզերը, որտեղ գյուղատնտեսությանը հատկացված են ընդհանուր վարկերի համապատասխանաբար 27.8%-ը, 27.3%-ը և 22.4%-ը, իսկ ամենափոքր տեսակարար կշիռն ունի Երևանը՝1.3%:

Հանրային սննդի և սպասարկման այլ ոլորտներ. այս ոլորտի վարկերի տեսակարար կշիռը տատանվում է 1-14%-ի միջակայքում: Ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Տավուշի, Գեղարքունիքի մարզերը և Երևանը՝ համապատասխանաբար 13.6%, 6.8% և 5.8%:

Տրանսպորտի և կապի ճյուղ. բոլոր մարզերում այս ճյուղին տրամադրած վարկերն ունեն շատ փոքր տեսակարար կշիռ՝ 0-4%: Ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Երևանը, Սյունիքի և Կոտայքի մարզերը, որտեղ տրամադրված վարկերի համապատասխանաբար 4.1%-ը, 2.5%-ը և 1.8%-ը հատկացված են այս ճյուղին:

Հավելված 1.1

Առևտրային բանկերի ընդհանուր վարկային ներդրումների ներմարզային կառուցվածքը (30.06.12 թ.)

(մարզերի մասնաբաժինները հաշվարկված են մարզի ընդհանուր վարկային ներդրումների նկատմամբ)

%

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան	Արարատի մարզ	Արագածոտնի մարզ	Արմավիրի մարզ	Գեղարքունիքի մարզ	Լոռու մարզ	Կոտայքի մարզ	Սյունիքի մարզ	Վայոց ձորի մարզ	Տավուշի մարզ	ՀՀ	Ընդամենը
1. Ըստ ճյուղերի տրամադրված միջոցներ												
1.1. արդյունաբերություն, այդ թվում՝	19.5	36.2	23.8	54.8	18.7	18.0	25.4	8.0	35.1	32.0	31.4	17.3	23.2
հանքագործական	8.7	2.7	1.1	67.3	2.9	0.5	14.0	1.7	2.4	0.7	40.7	1.6	17.3
էներգետիկա	29.2	3.9	11.8	3.5	51.8	48.1	39.9	48.9	73.6	45.8	34.3	51.9	26.4
սննդամթերք	27.0	78.7	53.0	17.7	16.0	28.3	19.9	16.4	19.8	50.4	10.3	30.6	29.7
թեթև	5.9	0.6	1.1	1.3	2.6	13.8	5.6	5.7	0.3	0.0	1.2	5.3	4.3
քիմիական	1.4	4.4	0.2	7.7	0.0	0.0	0.1	0.2	0.0	1.0	4.0	0.0	2.4
շինանյութերի	15.7	5.4	28.3	1.0	22.1	2.3	1.6	13.3	3.7	0.6	9.0	3.6	11.4
թանկարժեք իրեր	2.8	0.0	2.2	0.0	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.0	0.2	0.1	1.6
մետալուրգիա	1.9	0.6	0.1	0.1	0.0	0.0	13.8	0.0	0.0	0.1	0.0	0.0	1.5
մեքենաշինական և էլեկտրատեխնիկական	2.5	0.1	0.2	0.1	2.3	0.5	0.2	10.7	0.2	0.4	0.0	1.5	1.5
արդյունաբերության այլ ճյուղեր	4.9	3.6	1.9	1.3	2.2	6.5	5.0	3.1	0.0	1.0	0.2	5.3	3.8
1.2. գյուղատնտեսություն, այդ թվում՝	1.3	22.4	13.7	16.2	27.3	14.6	9.7	14.1	10.4	27.8	10.0	6.4	6.2
անասնապահություն	29.3	38.3	80.4	33.8	69.7	55.6	69.7	75.2	81.0	79.8	62.4	70.3	54.8
բուսաբուծություն	70.7	61.7	19.6	66.2	30.3	44.4	30.3	24.8	19.0	20.2	37.6	29.7	45.2
1.3. շինարարություն	8.2	0.7	4.8	0.4	4.4	5.5	6.0	1.6	4.1	1.3	1.7	13.8	6.9
1.4. տրանսպորտ և կապ	4.1	0.8	1.8	0.7	0.2	0.3	1.1	0.3	0.2	0.0	2.5	0.6	2.9
1.5. առևտուր, այդ թվում՝	27.6	11.3	21.5	6.8	15.3	15.2	17.1	15.9	9.6	7.3	11.3	7.7	22.0
մեծածախ առևտուր	60.0	38.6	69.1	22.9	53.7	19.7	24.0	19.6	7.7	68.1	26.3	13.7	55.3
մանրածախ առևտուր	38.1	61.2	30.8	75.5	45.5	79.9	75.9	80.4	92.2	29.8	65.1	82.0	42.9
1.6. հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ	5.8	0.7	4.5	1.0	3.1	2.9	2.5	6.8	13.6	3.0	4.3	2.2	4.8
1.7. ֆինանսական հատված	5.6	0.0	0.4	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	6.7	3.9
1.8. սպառողական վարկեր	14.8	20.3	22.1	14.7	25.2	34.2	28.7	39.3	23.6	22.2	30.2	14.7	17.6
1.9. հիփոթեքային (բնակարանային) վարկեր	9.5	4.2	5.9	3.9	4.7	7.7	6.5	6.2	2.7	4.4	6.3	8.2	8.1
1.10. տնտեսության այլ ճյուղեր	3.6	3.5	1.4	1.4	1.1	1.5	3.0	7.7	0.6	2.0	2.3	22.5	4.2
2. Ընդամենը տեղաբաշխված միջոցներ, այդ թվում՝	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
2.1. ժամկետանց	1.6	1.4	4.7	0.7	0.6	0.5	1.1	0.8	0.2	0.3	0.3	0.5	1.5
2.2. միջազգային ծրագրերով տրամադրված վարկեր	15.7	23.6	22.5	12.9	32.3	29.3	30.2	51.2	24.7	28.7	25.4	2.8	17.7
2.3. փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկեր (ներառյալ՝ միջազգային ծրագրերով)	24.1	34.0	27.6	18.3	17.1	29.0	34.0	26.1	32.8	29.0	25.9	13.1	24.3
3. Ակտիվների քանակը	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x
3.1. մինչև 5000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	90.8	95.6	94.7	95.8	95.9	95.5	95.6	96.0	97.1	96.5	95.5	91.9	93.5
3.2. 5001-10000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	3.1	2.2	2.5	2.1	2.0	2.3	2.3	2.1	1.5	1.9	2.4	3.4	2.6
3.3. 10001-25000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	3.1	1.3	1.7	1.4	1.3	1.4	1.4	1.2	0.9	0.9	1.2	2.8	2.1
3.4. 25001-50000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	1.4	0.4	0.6	0.4	0.5	0.4	0.4	0.4	0.2	0.3	0.4	1.0	0.9
3.5. 50001-ից ավելի ԱՄՆ դոլարին համարժեք գումար	1.6	0.5	0.6	0.3	0.3	0.3	0.4	0.3	0.3	0.4	0.5	0.9	0.9

Հավելված 1.2

Առևտրային բանկերի ընդհանուր վարկային ներդրումների միջմարզային ճյուղային կառուցվածքը (30.06.12 թ.)

(մարզերի մասնաբաժինները հաշվարկված են համակարգի տվյալ ճյուղին տրամադրված ընդհանուր վարկային ներդրումների նկատմամբ)

%

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան	Արարատի մարզ	Արագածոտնի մարզ	Արմավիրի մարզ	Վայոց ձորի մարզ	Գեղարքունիքի մարզ	Լոռու մարզ	Կոտայքի մարզ	Սյունիքի մարզ	Տավուշի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
1. Ըստ ճյուղերի տրամադրված միջոցներ												
1.1. արդյունաբերություն, այդ թվում՝	52.9	6.0	5.5	15.7	1.3	2.7	3.6	0.5	2.2	2.4	3.0	4.2	100.0
հանքագործական	26.6	1.0	0.3	61.1	0.2	0.1	2.9	0.0	0.3	0.1	7.0	0.4	100.0
էներգետիկա	58.4	0.9	2.4	2.1	2.6	5.0	5.4	0.9	6.0	4.2	3.8	8.2	100.0
սննդամթերք	48.1	15.9	9.8	9.3	0.7	2.6	2.4	0.3	1.4	4.1	1.0	4.3	100.0
թեթև	71.8	0.9	1.4	4.9	0.8	8.8	4.6	0.6	0.1	0.0	0.9	5.1	100.0
քիմիական	31.9	11.1	0.4	50.4	0.0	0.0	0.1	0.0	0.0	1.0	4.9	0.1	100.0
շինանյութերի	73.4	2.9	13.7	1.4	2.6	0.6	0.5	0.6	0.7	0.1	2.4	1.3	100.0
թանկարժեք իրեր	91.7	0.0	7.4	0.1	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.0	0.4	0.2	100.0
մետալուրգիա	64.6	2.3	0.3	0.6	0.0	0.0	32.2	0.0	0.0	0.1	0.0	0.0	100.0
մեքենաշինական և էլեկտրատեխնիկական	86.1	0.4	0.9	1.0	2.0	0.8	0.5	3.4	0.3	0.6	0.0	4.1	100.0
արդյունաբերության այլ ճյուղեր	69.0	5.7	2.8	5.2	0.8	4.7	4.7	0.4	0.0	0.6	0.2	5.9	100.0
1.2. գյուղատնտեսություն, այդ թվում՝	13.4	13.9	11.8	17.3	7.2	8.3	5.1	3.3	2.4	7.9	3.5	5.8	100.0
անասնապահություն	7.2	9.7	17.3	10.7	9.2	8.5	6.5	4.5	3.6	11.5	4.0	7.4	100.0
բուսաբուծություն	21.0	19.0	5.1	25.4	4.8	8.2	3.5	1.8	1.0	3.5	2.9	3.8	100.0
1.3. շինարարություն	75.5	0.4	3.7	0.4	1.0	2.8	2.8	0.3	0.9	0.3	0.5	11.2	100.0
1.4. տրանսպորտ և կապ	89.2	1.0	3.3	1.6	0.1	0.3	1.2	0.2	0.1	0.0	1.9	1.1	100.0
1.5. առևտուր, այդ թվում՝	79.3	2.0	5.2	2.1	1.1	2.4	2.5	1.0	0.6	0.6	1.1	2.0	100.0
մեծածախ առևտուր	86.0	1.4	6.5	0.9	1.1	0.9	1.1	0.4	0.1	0.7	0.5	0.5	100.0
մանրածախ առևտուր	70.4	2.8	3.7	3.6	1.2	4.5	4.5	1.9	1.3	0.4	1.7	3.8	100.0
1.6. հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ	76.3	0.5	5.0	1.4	1.1	2.1	1.7	2.0	4.1	1.1	1.9	2.6	100.0
1.7. ֆինանսական հատված	89.7	0.0	0.6	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	9.6	100.0
1.8. սպառողական վարկեր	53.0	4.5	6.7	5.5	2.4	6.9	5.3	3.2	1.9	2.2	3.7	4.7	100.0
1.9. հիփոթեքային (բնակարանային) վարկեր	74.1	2.0	3.9	3.2	0.9	3.3	2.6	1.1	0.5	1.0	1.7	5.7	100.0
1.10. տնտեսության այլ ճյուղեր	54.0	3.2	1.8	2.2	0.4	1.3	2.3	2.6	0.2	0.9	1.2	29.9	100.0
2. Մարզի ընդհանուր վարկային ներդրումների տեսակարար կշիռը բանկային համակարգի վարկային ներդրումներում, այդ թվում՝	63.2	3.9	5.3	6.7	1.6	3.5	3.3	1.4	1.4	1.8	2.2	5.6	100.0
2.1. ժամկետանց	69.1	3.6	16.6	3.0	0.6	1.1	2.5	0.7	0.2	0.3	0.4	1.9	100.0
2.2. միջազգային ծրագրերով տրամադրված վարկեր	55.8	5.1	6.8	4.8	3.0	5.8	5.6	4.1	2.0	2.9	3.1	0.9	100.0
2.3. փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկեր (ներառյալ՝ միջազգային ծրագրերով)	62.7	5.4	6.1	5.0	1.2	4.2	4.6	1.5	1.9	2.1	2.3	3.0	100.0
3. Ակտիվների քանակը	40.5	6.6	7.1	8.4	3.6	8.4	7.5	4.3	3.0	2.3	3.9	4.5	100.0
3.1. մինչև 5000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	39.3	6.8	7.2	8.6	3.7	8.6	7.7	4.4	3.1	2.3	3.9	4.4	100.0
3.2. 5001-10000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	47.8	5.6	6.8	6.8	2.8	7.5	6.5	3.5	1.7	1.6	3.5	5.9	100.0
3.3. 10001-25000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	59.2	4.1	5.6	5.6	2.2	5.7	4.8	2.3	1.3	1.0	2.3	5.9	100.0
3.4. 25001-50000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	66.8	3.2	5.2	4.1	2.1	4.1	3.6	2.0	0.8	0.9	1.9	5.4	100.0
3.5. 50001-ից ավելի ԱՄՆ դոլարին համարժեք գումար	71.4	3.6	4.7	2.6	1.2	3.2	3.3	1.3	1.1	1.0	2.1	4.4	100.0

Հավելված 1.3

Առևտրային բանկերի ընդհանուր վարկային ներդրումների ներմարզային ճյուղային կառուցվածքն ըստ ժամկետների (30.06.12 թ.)

(մարզերի մասնաբաժինները հաշվարկված են մարզի ընդհանուր վարկային ներդրումների նկատմամբ)

%

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան		Արտաքին վարկ		Կոտայքի մարզ		Արմավիրի մարզ		Արագածոտնի մարզ		Շիրակի մարզ		Լոռու մարզ		Գեղարքունիքի մարզ		Տավուշի մարզ		Վայոց ձորի մարզ		Սյունիքի մարզ		ԼՂՀ		Ընդամենը	
	մինչև 1 տարի	1 տարուց վեր	մինչև 1 տարի	1 տարուց վեր	մինչև 1 տարի	1 տարուց վեր	մինչև 1 տարի	1 տարուց վեր	մինչև 1 տարի	1 տարուց վեր	մինչև 1 տարի	1 տարուց վեր	մինչև 1 տարի	1 տարուց վեր	մինչև 1 տարի	1 տարուց վեր	մինչև 1 տարի	1 տարուց վեր	մինչև 1 տարի	1 տարուց վեր	մինչև 1 տարի	1 տարուց վեր	մինչև 1 տարի	1 տարուց վեր	մինչև 1 տարի	1 տարուց վեր
1. Ըստ ճյուղերի տրամադրված միջոցներ																										
1.1. արդյունաբերություն, այդ թվում՝	4.0	15.4	1.4	34.8	2.8	21.0	0.3	54.5	1.7	17.0	0.5	17.5	1.2	24.2	0.2	7.8	0.3	34.8	2.5	29.5	5.6	25.9	1.2	16.1	3.1	20.1
հանքագործական	5.0	3.7	0.0	2.7	0.0	1.1	0.0	67.3	0.1	2.8	0.0	0.4	3.6	10.4	0.0	1.7	0.5	1.9	0.0	0.7	0.1	40.6	0.0	1.6	2.8	14.5
էներգետիկա	4.7	24.5	0.0	3.8	0.0	11.8	0.0	3.5	3.3	48.4	0.1	48.1	0.0	39.9	1.0	47.9	0.2	73.4	5.2	40.7	1.4	32.9	4.2	47.7	2.9	23.6
սննդամթերք	4.7	22.3	3.6	75.0	8.0	45.0	0.4	17.3	4.6	11.4	1.0	27.3	0.7	19.2	0.3	16.1	0.0	19.8	1.6	48.8	4.2	6.1	2.0	28.6	3.6	26.2
թեթև	0.3	5.5	0.0	0.6	0.0	1.1	0.0	1.3	0.3	2.3	0.3	13.5	0.5	5.0	0.3	5.4	0.0	0.2	0.0	0.0	0.1	1.1	0.1	5.2	0.2	4.1
քիմիական	1.0	0.5	0.0	4.4	0.0	0.2	0.0	7.7	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.1	0.0	0.2	0.0	0.0	1.0	0.0	4.0	0.0	0.0	0.0	0.7	1.7
շինանյութերի	3.3	12.4	0.1	5.3	2.4	25.9	0.0	1.0	0.8	21.3	0.0	2.3	0.0	1.5	0.1	13.2	0.0	3.7	0.0	0.6	7.9	1.2	0.1	3.5	2.2	9.2
թանկարժեք իրեր	0.0	2.8	0.0	0.0	1.1	1.1	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.2	0.0	0.1	0.1	1.5
մետալուրգիա	0.5	1.4	0.0	0.5	0.0	0.1	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.0	0.0	13.8	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.0	0.3	1.3
մեքենաշինական և էլեկտրատեխնիկական	0.1	2.4	0.0	0.1	0.0	0.2	0.0	0.1	0.0	2.3	0.0	0.4	0.0	0.2	0.0	10.7	0.0	0.2	0.0	0.4	0.0	0.0	0.4	1.1	0.1	1.4
արդյունաբերության այլ ճյուղեր	1.1	3.9	0.1	3.5	0.2	1.8	0.1	1.2	0.0	2.2	1.6	4.9	0.0	5.0	0.0	3.0	0.0	0.0	0.0	1.0	0.0	0.2	0.0	5.3	0.6	3.2
1.2. գյուղատնտեսություն, այդ թվում՝	0.4	1.0	2.6	19.8	2.4	11.3	2.0	14.2	1.9	25.4	2.4	12.2	2.2	7.6	4.2	9.9	1.8	8.6	2.3	25.5	3.0	7.0	1.7	4.6	1.1	5.1
անասնապահություն	0.7	28.6	8.1	30.2	11.4	69.0	4.2	29.5	2.9	66.8	4.1	51.5	7.7	62.0	19.5	55.7	8.2	72.8	4.4	75.4	7.7	54.7	17.0	53.4	6.7	48.1
բուսաբուծություն	26.7	43.9	3.4	58.3	6.0	13.6	7.8	58.4	4.1	26.2	12.4	32.1	14.7	15.6	10.1	14.7	9.1	9.8	4.0	16.2	22.3	15.3	10.2	19.4	10.5	34.7
1.3. շինարարություն	0.7	7.6	0.2	0.4	0.7	4.1	0.2	0.2	1.0	3.4	0.8	4.8	0.3	5.7	0.2	1.4	0.3	3.8	0.6	0.7	0.1	1.6	3.3	10.5	0.8	6.2
1.4. տրանսպորտ և կապ	0.7	3.4	0.0	0.8	0.0	1.8	0.1	0.6	0.0	0.2	0.1	0.2	0.0	1.1	0.0	0.3	0.0	0.1	0.0	0.0	0.0	2.5	0.0	0.5	0.4	2.5
1.5. առևտուր, այդ թվում՝	5.4	22.2	0.5	10.8	2.6	18.9	0.4	6.5	1.0	14.3	0.9	14.3	1.0	16.1	0.6	15.3	0.1	9.5	0.2	7.0	0.5	10.8	1.0	6.7	3.7	18.3
մեծածախ առևտուր	13.5	46.5	1.0	37.6	5.4	63.8	0.5	22.4	1.7	52.0	2.6	17.1	1.6	22.4	0.4	19.2	0.0	7.7	0.1	68.0	0.9	25.4	1.7	12.1	11.2	44.1
մանրածախ առևտուր	5.5	32.6	3.0	58.2	6.6	24.2	3.3	72.2	5.0	40.5	3.4	76.6	4.0	71.9	3.4	77.0	1.3	90.9	3.0	26.9	3.3	61.8	11.4	70.5	5.4	37.5
1.6. հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ	0.5	5.3	0.0	0.7	0.0	4.5	0.0	1.0	0.1	3.0	0.2	2.7	0.0	2.5	0.2	6.6	0.1	13.6	0.3	2.7	0.1	4.2	0.1	2.2	0.3	4.5
1.7. ֆինանսական հատված	5.0	0.6	0.0	0.0	0.0	0.4	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	6.7	0.0	3.5	0.4
1.8. սպառողական վարկեր	4.7	10.1	10.9	9.4	10.7	11.4	7.7	7.0	11.4	13.8	17.7	16.5	11.6	17.1	24.9	14.4	15.0	8.7	14.0	8.2	18.5	11.6	6.8	7.9	7.3	10.4
